Հաստատված է
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ամբիոնի
«23» 01. 2023 թ.-ի նիստում: Արձ. № 2
Ամբիոնի պետ՝
Գ. Խուդոյան
« »----------2023 թ.

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ
ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ
/ Կազմվել է ուսումնական ծրագրի նախագծի հիման վրա/

ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ		**ՀՀ ֆինանսական իրավունք**
ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԻՉ		
ՖԱԿՈՒԼՏԵՏ		Իրավագիտություն: Առկա անվճար
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ		Իրավագիտություն
ԱՄԲԻՈՆ ▪ **մասնաշենք/սենյակ** ▪ **հեռախոս** ▪ **էլ հասցե** ▪ **Web կայքի հասցե**		Վարչական իրավունքի և ոստիկանության վարչական գործունեության ամբիոն varchakan@ro.ru
ՀԵՂԻՆԱԿ/ՆԵՐ		Ն. Սարգսյան
ՈՒՍ.ՏԱՐԻ/ԿԻՍԱՄՅԱԿ		2-ին կուրս, 3-րդ կիսամյակ

ԿՐԵԴԻՏՆԵՐ		**3 /երեք/ կրեդիտ**
ԴԱՍԱԺԱՄԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ		«ՀՀ ֆինանսական իրավունք» դասընթացի ընդհանուր ծավալը կազմում է 60 ժամ, որից լսարանային՝ 36 ժամ, որից 18 ժամ դասախոսություն, 12 սեմինար, 6 ժամ գործնական, 24 ժամ ինքնուրույն աշխատանք: Ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված ժամերին ուսանողը ընթերցում է գրականություն և մշակում, կատարում վերլուծական ու հետազոտական աշխատանք, դասախոսի հանձնարարությամբ կարող է գրել ռեֆերատներ և պատրաստվել հաջորդ դասին: Լսարանային դասերը կայանում են շաբաթը մեկ-երկու անգամ՝ 80 րոպե տևողությամբ: Դասընթացն ավարտվում է կիսամյակի վերջում առանց եզրափակիչ գնահատման:
ՆԱԽԱՊԱՅՄԱՆ		Դասընթացը կառուցվում է «ՀՀ Սահմանադրական իրավունք» և «ՀՀ վարչական իրավունք» դասընթացների իմացության վրա:
ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ		

ՆՊԱՏԱԿ **ԽՆԴԻՐ/ՆԵՐ**		Դասընթացի նպատակն է ուսանողներին մատուցել համապարփակ գիտելիքներ՝ 1. ՀՀ Ֆինանսական իրավունք առարկայի էության և բովանդակության մասին, 2. Ֆինանսական գործունեության իրավական ձևերի մասին, 3. Ֆինանսական իրավունքի սկզբունքների մասին, 4. Ֆինանսաիրավական հարաբերությունների առանձնահատկությունների և տեսակների մասին, 5. Իրավունքի այլ ճյուղերի հետ ֆինանսական իրավունքի կապի մասին:
ԿՐԹԱԿԱՆ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ***1. Իմանա՝***

		2016թ. հոկտեմբերի 4-ի «Հարկային օրենսգիրք» ՀՀ օրենք, ՀՀՊՏ 2016.11.04/79(1259): Եվ այլն:
Լրացուցիչ		1. Գ.Ա.Սուքիասյան, Ն.Գ.Սուքիասյան <<Ֆինանսական իրավունք>> ուսումնական ձեռնարկ բուհերի համար, <<իրավունք>>, Ե. 2010 2. Ա.Հ.Խաչատրյան <<Հարկային իրավունք>> Երևան ՀՀ ԳԱԱ հրատարակչություն 2003թ. 3. Ս.Վ.Մուրադյան, Է.Է.Շաթիրայն <<Ֆինանսական իրավունք>> ուսումնական ձեռնարկ Երևան 2006թ. 4. Финансовое право, учебник, под. ред. С.В.Запольского, М. ЕКСМО 2006г. 5. Куксин И.Н. Налогообложение и налоговая политика России М. 1997г. 6. Экономика и право, экономический словарь Гоблера, Москва 1998г. 7. Карасьева М.В. Финансовое право М. Юрист

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ ԵՎ ԿՇԻՌ		Ստուգարք /ստուգված, չստուգված/:
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ / ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ		Սովորողը դասընթացից կարող է ունենալ մինչև 100% (ստուգված) առաջադիմություն: Սովորողների գիտելիքները, ունակությունները և հմտությունները գնահատվում են «Ստուգված» կամ «Չստուգված»: Սովորողների գիտելիքները գնահատվում են հետևյալ չափանիշներով՝ բ) «Ստուգված», եթե սովորողը հիմնավոր գիտի ծրագրային նյութը, գրագետ է և ըստ էության շարադրում է այն, հարցին պատասխանելիս թույլ չի տալիս էական անճշտություններ, կարողանում է ճիշտ կիրառել տեսական դրույթները, գործնական առաջադրանքները կատարելիս տիրապետում է անհրաժեշտ ունակությունների ու հմտությունների, կամ եթե սովորողը յուրացրել է միայն հիմնական նյութը, բայց չգիտի դրա առանձին մանրամասները, թույլ է տալիս անճշտություններ, ոչ ճիշտ ձևակերպումներ, խախտում է ուսումնական նյութի շարադրման հաջորդականությունը և դժվարանում է կատարել գործնական առաջադրանքները. դ) «Չստուգված», եթե սովորողը չգիտի ծրագրային նյութի զգալի մասը, թույլ է տալիս էական սխալներ, չի կարողանում կատարել գործնական առաջադրանքներն ու լուծել խնդիրները:
ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
Ներկայություն		Դասապլանի որևէ փոփոխություն նախօրոք կտեղեկացվի ուսանողին:
Գրավոր աշխատանքներին ներկայացվող պահանջներ		Ուսանողի դասերին ներկայությունը բխում է նրա իսկ շահերից, քանի որ ներկայությունը ենթադրում է ունկընդրում, մասնակցություն քննարկումներին, չհասկացված կամ վատ հասկացված խնդիրների պարզաբանում, ինքնուրույն և գործնական աշխատանքների հանձնում: Ուսանողն այս դեպքում հնարավորություն է ունենում լսել ոչ միայն ծրագրային նյութը, այլև մասնակցել քննարկումներին, բանավեճերին, անել ինքնուրույն դատողություններ և հայտնել սեփական տեսակետը:
Ինքնուրույն և գործնական աշխատանքներ		Գրավոր աշխատանքների ժամանակ արգելվում է ծածկագրերից օգտվելը: Ծածկագրի հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է զրո միավոր:

		Ինքնուրույն և գործնական աշխատանքները անհրաժեշտ է կատարել առանց կողմնակի միջամտության և հանձնել դրանք նշված ժամանակահատվածում: Ինքնուրույն աշխատանքում արգելվում է գրագողությունը: Այլոց մտքերը օգտագործելու դեպքում ուսանողը պարտավոր է նշել աղբյուրը ըստ ընդունված ակադեմիական ձևաչափի:

ԱՌԱՐԿԱՅԻ ԹԵՄԱՏԻԿ ՏՐՈՀՈՒՄ

Թեմա 1 **«Ֆինանսները և պետության ֆինանսական գործունեությունը»** **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցերը	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Ֆինանսների հասկացույունը և ՀՀ Ֆինանսական համակարգը: 2. Պետության ֆինանսական գործունեության հասկացությունը և դրա իրականացման մեթոդները: 3. ՀՀ ֆինանսական գործունեություն իրականացնող պետական մարմինների համակարգը և իրավական վիճակը:	Հարցեր 1-3 - անցկացվում է դասախոսություն՝ ուսանողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա: Հարցեր 1-3 – սեմինար պարապմունք, խնդրահարույց հարցերի քննարկում: Հարցեր 1-3 – ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը՝ այնուհետև սեմինար պարապմունքի ժամանակ քննարկվում են խնդրահարույց հարցերը, ստուգվում են ընթացիկ առաջադրանքները:

Թեմա 2 **«ՀՀ ֆինանսական իրավունքի առարկան և համակարգը»** **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Ֆինանսական իրավունքի հասկացությունը, առարկան և մեթոդը: 2. ՀՀ ֆինանսական իրավունքի աղբյուրները և համակարգը: 3. ՀՀ ֆինանսական իրավունքի կապը իրավունքի այլ ճյուղերի հետ:	Հարցեր 1-3 - կարդացվում է դասախոսություն: Հարցեր 1-3 – ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը՝ տվյալ հարցերի վերաբերյալ ավելի խորը գիտելիքներ ձեռք բերելու համար: Ստուգվում են ընթացիկ առաջադրանքները, կազմակերպվում են թեմատիկ ցուցադրություններ:

Թեմա 3 **«Ֆինանսահիրավական նորմեր և հարաբերություններ»** **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Ֆինանսահիրավական նորմի հասկացությունը և ընդհանուր բնութագիրը: Ֆինանսահիրավական նորմերի տեսակները: 2. Ֆինանսական իրավահարաբերության հասկացությունը, բովանդակությունը, առանձնահատկությունները և դասակարգումը:	Հարցեր 1-3 - անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման եղանակով: Հարցեր 1-3 – սեմինար պարապմունք. խնդրահարույց հարցերի քննարկում: Հարցեր 1-3 – ինքնուրույն աշխատանք ուսանողները ծանոթանում են անհրաժեշտ նյութերին, վերհանում խնդրահարույց

3. Ֆինանսական իրավունքի սուբյեկտների իրավունքների իրավական պաշտպանությունը:	հարցերը և դրանք քննարկում հաջորդ դասախոսությունների և սեմինարների ժամանակ:

Թեմա 4 **«Պետական եկամուտները: Պետ եկամուտների իրավական կարգավորումը: Հարկային իրավունք»** **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Պետ եկամուտների հասկացությունը, դրանց աղբյուրները և կազմը: Հարկի հասկացությունը և նշանակությունը: 2. Հարկերի տեսակները: Հարկման համակարգերը(Ընդհանուր հարկման դաշտ, Միկրոձեռնարկատիրության համակարգը, Շրջանառության հարկի դաշտը, Պետական տուրքի վճարումով աշխատող ձեռնարկատերերը): Շահութահարկ, ԱԱՀ, Ակցիզային հարկ, Եկամտային հարկ, Անշարժ գույքի հարկ, Տրանսպորտային միջոցների գույքահարկ, Բնապահպանական հարկ, Ճանապարհային հարկ, Շրջանառության հարկ: Հարկման օբյեկտները, սուբյեկտները և հարկման դրույքաչափերը, հաշվետու ժամանկաշրջանները: 3. Հարկ վճարողների իրավունքները և պարտականությունները: Պատասխանատվությունը հարկային օրենսդրությունը խախտելու համար:	Հարցեր 1-3 - անցկացվում է դասախոսություն: Հարցեր 1-3 - ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են անհրաժեշտ նյութերին, վեր են հանում խնդրահարույց հարցերը, որոնք քննարկվում են սեմինար պարապմունքի և հաջորդ դասախոսության ժամանակ: Հարցեր 1-3 - անցկացվում է սեմինար պարապմունք (սեմինարը կարող է անցկացվել խմբային քննարկման միջոցով): Ստուգվում են ընթացիկ առաջադրանքները, կազմակերպվում են թեմատիկ ցուցադրություններ, տրվում են տեստային առաջադրանքներ:

Թեմա 5 **«Պետական ոչ հարկային եկամուտները, դրանց իրավական կարգավորումը»** **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ գործնական)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Ոչ հարկային եկամուտների հասկացությունը և համակարգը: Մաքսային կանոնակարգեր, մաքսատուրքեր և վճարներ: 2. Պետական տուրք, տեղական տուրքեր և վճարներ(Հարկերի և տուրքերի ու վճարների տարբերությունը): Պարտադիր սոցիալական ապահովության վճարներ, Դրոշմանիշային վճարներ, Բնօգտագործման վճարներ: 3. Եկամուտների համատարած հայտարարագրման համակարգը:	Հարցեր 1-3 - անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման ձևով, որտեղ առանձնակի ուշադրություն է դարձվում ուսանողների կողմից ներկայացված խնդրահարույց հարցերին: Հարցեր 1-3 – անցկացվում է գործնական պարապմունք, իսկ սովորողն էլ դասախոսի հանձնարարականով պատրաստվում է պարապմունքին գրականության համապատասխան էջերը ուսումնասիրելով: 1-3 ինքնուրույն աշխատանք: Ուսանողները նախօրոք ծանոթանում են հանձնարարված գրականությանը;

Թեմա 6 **«Պետական ծախսերը: Բյուջետային իրավունք: Բյուջեի հասկացությունը և ՀՀ բյուջետային համակարգն ու կառուցվածքը»** **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցերը	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Պետական և տեղական բյուջեի դերը և նշանակությունը: Բյուջետային իրավունքի հասկացությունը, առարկան և մեթոդը:	Հարցեր 1-3 - անցկացվում է դասախոսություն: Հարցեր 1-3 - անցկացվում է գործնական պարապմունք ՀՀ ֆինանսների նախարարությունում:

2. Բյուջետային իրավունքի օրենսդրական հիմքերը: Բյուջետային իրավահարաբերությունների հասկացությունը և առանձնահատկությունները: Պետական և տեղական ծախսերը: 3. Պարտադիր սոցիալական ապահովության բյուջե: Զինծառայողների ապահովագրության հիմնադրամ:	Հարցեր 1-3 –ինքնուրույն աշխատանք, ուսանողները ծանոթանում են խնդրահարույց հարցերին:

Թեմա 7 **«Բյուջետային գործընթացը ՀՀ – ում»** **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ գործնական)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Բյուջետային գործընթացի հասկացությունը և փուլերը: ՀՀ պետական բյուջեի նախագծի կազմման կարգը: Ֆիանսների նախարարության դերը: Պետական բյուջեի քննարկման և հաստատման կարգը: Ֆինանսաբյուջետային հանձնաժողովի իրավունքները: 2. Համայնքի բյուջեի կառուցվածքը և գործընթացի փուլերը: Բյուջեի կատարման հասկացությունը և կարգը: Կառավարման կենտրոնական մարմինների դերը բյուջեի կատարման գործում: 3. Բյուջեի կատարումն ու այն իրականացնող մարմինները: Բյուջեի եկամտային և ծախսային մասերի կատարման կարգը: Բյուջեի եզրափակումը: Բյուջեի կատարման մասին հաշվետվությունը, դրա կազմման, քննարկման և հաստատման կարգը:	Հարցեր 1-3 - անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման միջոցով: Հարցեր 1-3 - գործնական պարապմունքի անցկացում և հարցերի քննարկում պետ եկամուտների կոմիտեում: Հարցեր 1-3 ինքնուրույն աշխատանք, ծանոթացում գրականության հետ:

Թեմա 8 **«Ֆինանսական վերահսկողության դերը և նշանակությունը»** **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Ֆինանսական վերահսկողության հասկացությունը, նշանակությունը և տեսակները: Ֆինանսական վերահսկողություն իրականացնող մարմինները, դրանց խնդիրները և իրավասությունը 2. Ստուգումների նպատակը, անցկացման կարգը և արդյունքների ամփոփումը, ստուգող և ստուգվող մարմինների իրավունքները և պարտականությունները: Ֆինանսական վերահսկողության մեթոդներն ու եղանակները:	Հարցեր 1-2 - անցկացվում է դասախոսություն: Հարցեր 1-2 – ինքնուրույն աշխատանք և սեմինարի անցկացում ու խնդրահարույց հարցերի հանգամանալից քննարկում:

Թեմա 9 **«Ֆինանսական վերահսկողություն իրականացնող մարմինները, դրանց կարգավիճակի առանձնահատկությունները»** **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ գործնական)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Ֆինանսական վերահսկողությունը ՀՀ ԱԺ գործունեության ոլորտում: Պետական հաշվեքննությունը, Հաշվեքննիչ Պալատի դերը: Բանկային վերահսկողությունը, ՀՀ Կենտրոնական բանկի դերը 2. Ֆինանսական վերահսկողությունը գործադիր իշխանության գործունեության ոլորտում:	Հարցեր 1-3 - Դասախոսություն՝ ուսանողների ակտիվ ներգրավմամբ, խմբային քննարկման ձևով: Հարցեր 1-3 - ինքնուրույն աշխատանք և գործնական պարապմունքի անցկացում: Հարցեր 1-3 - ընթացիկ առաջադրանքների ստուգում, ծանոթացում գրականության հետ:

Ֆինանսների նախարարության Ֆինանսաբյուջետային վերահսկողության վարչության ֆունկցիաները և իրավունքները: Պետական վերահսկողությունը, Պետական վերահսկողական ծառայություն դերը, Պետական եկամուտների կոմիտեի դերը: 3. Ֆինանսական վերահսկողություն իրականացնող այլ մարմինները: Աուդիտորական վերահսկողություն, Հաշվապահական վերահսկողություն, Հանրային հատվածի ներքին աուդիտ: Արժութային վերահսկողություն: Կանխիկ գործառնությունների վերահսկողություն:	